ՈՒՍՏԱՐԻ 2022-2023 / ANNÉE UNIVERSITAIRE 2022-2023
Փորձնական քննություններ/ Examens blancs
2-րդ կիսամյակ / 2ème semestre

ARMENIEN / ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

FORMULAIRE DE RÉPONSES / ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)
1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավոր: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:
1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:
Առաջադրանք 2. (7 միավոր)
2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
2.2. առաջադրանքի համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 3. (8 միավոր)
3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Առաջադրանք 4. (8 միավոր)
4.1., 4,2 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
4.3. առաջադրանքը գնահատվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:
Առաջադրանք 5. (6 միավոր)
5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավոր:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

Փորձնական քննություն

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1 Անհրաժեշտության դեպքում լրացնել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր):

Խավարչտին գիշեր էր, երբ Թերլեմեզյանը Այգեստան հասավ՝ ոտքից գլուխ թրջված ու հոգնած. ամբողջ ճանապարհին անցել էր հորդառատ անձրևի տակ: Այժմ ձին, անընդհատ սայթաքելով, ոտքերը հազիվ էր փոխում քաղաքի՝ անձրևից լպրծուն դարձած խորդուբորդ փողոցներով: Մի անորոշ ու անըմբռնելի տագնապ որդի պես կրծում էր սիրտը, և նա շտապեցնում էր խեղճ կենդանուն, որ տեղ հասնի որքան կարելի է շուտ: Փողոցն այժմ զառիվեր էր, և ձին դանդաղընթաց բարձրանում էր ծնկահար ցեխի ու հեղեղի փոխվող անձրևաջրի միջով: Նա հևում էր և քրտնել էր, //. կարծես ջրից նոր էր դուրս եկել:Հանկարծ գիշերային անդորրի մեջ նրա ականջին հասան ինչ-որ երգի մեղմահնչյուն ելևէջներ՝ թախծամրմունջ, մելամաղձոտ: Այդ երգի անուշ ու մեղմասահ մեղեդին, ասես սրտի խորքից բխելով, տարածվում էր շուրջբոլորը՝ դառնալով աղոթք ու ապաշխարհանք:

Քաղաքը կիսող հեղեղատին մոտենալով՝ Թերլեմեզյանը լույսի աղոտ շող նկատեց՝ ծառերի սաղարթների արանքից ցոլցլացող: Նրա սիրտը թրթռաց մի անբարբառ կարոտից. պատուհանից դուրս ցայտող լույսի դողդոջուն շերտը կարող է նա վառած լիներ իր համար: Երկու-երեք օր առաջ Թերլեմեզյանը մի կարճառոտ երկտող էր ստացել ընկերներից. «Ճգնության ժամանակը չէ. //, շտապ վերադարձի՛ր. արյան հոտ է գալիս»: Այդ լուրը՝ չարագույժ ու տագնապալի, տարօրինակ սարսուռով էր լցրել նրա հոգին:

-Եթե չեմ ուզում ընկերներիս արհամարհանքին արժանանալ, պիտի վերադառնամ,- շշնջաց նա՝ կրկին ու կրկին կարդալով երկտողը, որ վերջին օրերին նրա գրպանում էր:

Թաքուն մի նախազգացում նրան հուշում էր՝ ինքը վերջին անգամ է լինում հայրենի բնության գողտրիկ անկյունում՝ կղզու հեքիաթային գրկում, և այդ ամենը, ավա՜ղ, շուտով կընկնի անօրեն թուրքի ձեռքը: Ահա թե ինչու նա գիշերուզօր աշխատում էր կտավի վրա դրոշմել հրաշք կղզու ամեն մի ուրվագիծ, տաճարի խոյակ ու խաչքար՝ գալիք արհավիրքներից փրկելու սրբազան մասունքների հիշատակը:

1.2. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով (1 մ.):

1), ՆՈՐ ՏԱՐԻ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ, ԳԵՎՈՐԳՅԱՆ ՃԵՄԱՐԱՆ

2) ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄ, ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ՏԻԿԻՆ

3) ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳԱ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՔԱՋ ՆԱԶԱՐ

4) ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ, ԱԼՊՅԱՆ ԼԵՌՆԵՐ, ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ,
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բաղադրիչները գրվում են գծիկով (1 միավոր):

1) անցած(գնացած), հյուսիս(արևելք), կիլովատտ(ժամ) , ամսե(ամիս), հայ(թուրքական)

2) համենայն(դեպս), դույզն(ինչ), երեք(չորս), մեծով(փոքրով), սեփ(սև)

3) նոր(զելանդական), մանր(մունր), գոռում(գոչյուն), մեն(միայն), լատինա(ամերիկյան)

4) բուք(բորան), հասարակական(քաղաքական), ասած(չասած), ֆրանս (գերմանա-կան),քաղաք (պետություն)

Առաջադրանք 2 (7 միավոր)

2. 1. Բառաշարքերից մեկական արմատներ ընտրելով՝ կազմել վեց բարդ բառ (միասին գրվող բաղադրիչներով) (3 միավոր):

վերահաս	այնուամենայնիվ	ամենակուլ
պաշտոնաթող	մտավախություն	երեսպաշտ
սննդամթերք	առատաձեռն	ձեռնհաս
սիգաճեմ	դարձերես	ճեմասրահ
կլանել	զովացուցիչ	ազատամիտ
ձերբազատում	մարզասրահ	զովասուն

2. 2. Ընդգծել այն արմատները, որոնց կարող է ավելանալ *-ացի* վերջածանցը (4միավոր):

Փորձնական բնագիր

Քառա<u>տող</u>, վիրակապ, <u>քաղք</u>ենի, աստառ, <u>առն</u>ականորեն, հետամտել, <u>կն</u>ատյաց, երկրորդական, աստեղային, առողջ, <u>վիր</u>ահայ, այս<u>տեղ</u>, <u>լատին</u>/<u>ա</u>/<u>տառ</u>, անցաթուղթ խրոխտաձայն, արտ<u>երկիր</u>, գնացք:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր):

Մթնշաղ, համաձայնություն, այգ, պախուրց, դարան, դարման, ուխտ, որոգայթ, ցայգ, սպեղանի, ծեգ, առասան:

Մթնշաղ- ցայգ, համաձայնություն-ուխտ, այգ-ծեգ, պախուրց-առասան, դարան-որոգայթ, դարման- սպեղանի:

3. 2. Ընտրել հականիշների վեց զույգ (3 միավոր):

Տրտմել, առինքնել, զլանալ, տարփողել, սրդողել, խուսափել, պախարակել, վանել, խաղաղվել, բերկրել, հետամտել, տքնել:

Տրտմել- բերկրել, առինքնել- վանել, զլանալ- տքնել, տարփողել- պախարակել, սրդողել- խաղաղվել, խուսափել- հետամտել:

3.3. Նշել սխալ բացատրություն ունեցող դարձվածքների շարքերը (2 միավոր):

ա/շղթաները խորտակել –ազատագրվել, շնչի վրա նստել – շտապեցնել, շունչ տալ – կենդանացնել, շունչ քաշել - հանգստանալ

բ/ոգի առնել – ոգևորվել, ոսկի ձեռքեր ունենալ – շնորհալի լինել, ոսկի սիրտ ունենալ – դրական հատկանիշներով օժտված լինել, ոտ ու ձեռ ընկնել – խնդրել

գ/ջուրը գցել –փչացնել, **ջուրն ընկնել – խեղդվել**, ջուր ծեծել –անիմաստ գործ անել, ջուր պղտորել –կռիվ գցել

դ/սայլը տեղից շարժել – գործն առաջ տանել, սանձերը ձգել – չափավորել, **սիրտ անել – հոխորտալ,** սիրտ առնել – քաջանալ

ե/վզին կապել – պարտադրել, վիզ ծռել –խեղճանալ, վիզը ծուռ – խեղճ, վրա ընկնել – հարձակվել

Գորգսյան բնություն

զ/տաք գլուխ – հանդուգն, տեղը դնել –հանդիմանել, տեղը ծանր նստել –աներեր մնալ, տեղիք տալ – առիթ տալ

4.1. Ընտրել և ընդգծել ճիշտ տարբերակները (4 միավոր):

Քեզ նման, դեղորայքներ, չհաշված սխալներից, հանձինս Արամյանի, առանց Ձեզ , փողկապեր, ազգադավներ, մեր մոտ, ամենանորանոր, ըստ որում, իրեն երեսից, քո համար, ժամկետեր, բացի մասնակիցները, գերիզորագույն, իրիկնապահներ, ձեր վրայով, հանձինս ձեզ, ի ուրախություն, առանց զգուշացում, մեզ պես, հանձինս մեր ուսուցիչների:

4.2. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր):

Այդ հարուստ երիտասարդը դեռ մանկությունից ինքն իրեն հավատացրել (հավատացնում) էր, որ ոչ ոքի իրավունք չի տրված պարսավելու իրեն:

(հավատալ, պարսավել, մանկություն, ոչ ոք)

4.3. Նշել փակագծերում տրված բառերի ճիշտ տարբերակը (2 միավոր):

ա) Անսահման սիրո վեհ գաղափարն արտահայտված է բանաստեղծության վերջին (քառատողում, քառյակում):

բ) Միքայելի և անդամալույծի միջև սկսվեց մի (անօրինակ, անօրինական) պայքար:

գ) Երկու երկրների ղեկավարների (պաշտոնական, պաշտոնական) հանդիպումները շարունակվեցին մինչև պայմանագրի կնքումը:

դ) Սպարապետը ժպտաց և այդ ժպիտի տակ փորձեց քողարկել այն կասկածը, որով (վերաբերվում էր, վերաբերում էր) զորագնդի հրամանատարին:

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Գտնել խնդրառության սխալ ունեցող նախադասությունները և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Այդ հանգամանքները նրանց մղեցին սխալ քայլ կատարելու:

բ) Նա անտեղյակ էր այդ գործ~~ուից~~ //ին:

գ Բոլորս երախտապարտ էինք մեր ուսուցիչների~~ց~~ն՝ մեզ կայուն գիտելիքներ տալու համար:

դ) Բոլոր մասնակիցներն էլ պատրաստ էին խթանելու լավագույն աշակերտի աշխատանքը:

5.2. Գտնել համաձայնության սխալ ունեցող նախադասությունները և ուղղել սխալները (2 միավոր):

ա) Եվ բոլորը ճանաչեցին նրան՝ որպես լավագույն մասնագետ~~ի~~:

բ) Դա այն կանանցից էր, որ, հանդիպելով կյանքի դժվարություններին, երբեք չեն ընկճվում:

գ) Թե՛ Արամը, թե՛ Հակոբը մասնակցելու ~~է~~ են այդ միջոցառմանը:

դ) Ուսանողների մի մասը չի ենթարկվում կարգապահության կանոնների պահանջներին:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասության պարզեցման ճիշտ տարբերակը(1 միավոր):

Նա, որ միշտ սատարում է իր հարազատներին, հիմա պիտի թողնի նրանց ու հեռանա օտար ափեր:

ա) Իր հարազատներին միշտ սատարողը՝ նա, հիմա պիտի թողնի նրանց ու հեռանա օտար ափեր:

բ) Իր հարազատներին միշտ սատարողը հիմա պիտի թողնի նրանց ու հեռանա օտար ափեր:

գ) Նա՝ իր հարազատներին միշտ սատարողը, հիմա պիտի թողնի նրանց ու հեռանա օտար ափեր:

Փորձնական բնագիր

դ) Նա՝ իր հարազատներին միշտ սատարողը, հիմա պիտի թողնի ու հեռանա օտար ափեր:

5. 4. Նշել ուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը (1 միավոր):

- Դու շա՞տ ուրախացար, երբ մեր ընդհանուր ծանոթներից իմացար, որ գոնե քույրս սովորում է ձեր դպրոցում – հարցրեց ընկերս, երբ հանդիպեցինք:

ա) Երբ հանդիպեցինք, ընկերս հարցրեց, թե ես շա՞տ ուրախացա, երբ մեր ընդհանուր ծանոթներից իմացա, որ գոնե իր քույրը սովորում է մեր դպրոցում :

բ) Երբ հանդիպեցինք, ընկերս հարցրեց, թե ես շա՞տ ուրախացա, երբ իրենց ընդհանուր ծանոթներից իմացա, որ գոնե նրա քույրը սովորում է մեր դպրոցում :

գ) Երբ հանդիպեցինք, ընկերս հարցրեց, թե ես շա՞տ ուրախացա արդյոք, երբ մեր ընդհանուր ծանոթներից իմացա, որ գոնե իր քույրը սովորում է մեր դպրոցում :

դ) Երբ հանդիպեցինք, ընկերս հարցրեց, թե ես շա՞տ ուրախացա արդյոք, երբ իրենց ընդհանուր ծանոթներից իմացա, որ գոնե իր քույրը սովորում է մեր դպրոցում :

Փորձնական բնագիր